Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
10-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Մրրկահողմը խելագար մռնչում էր բարձրացնելով ավազախառն փոշու օդի մեջ գալարվող հսկա սյուներ: Հորիզոնը պարուրված մուգ դեղնավուն մռայլով հետզհետե խոժոռվում էր ծածկվելով թու-պերով: Փոթորկի հու-կու հոսանքի ներքո միմ-նց ամուր փաթաթված բաղեղներն ու երփնաթույր ծաղիկները կարծես խոր հառաչ էին արձակում դառնագին հե-կլտալով խոնար-վում գետնին ապա դժվարությամբ փորձում շտկել հողմակ-ծ գլուխները մինչև իսկ սրաթռիչ արծիվը լուրթ բարձունքների խրո-տ տիրակալը անզոր էր ըն-իմանալու զայրացած տարրի մռնչուն ալիքներին:

Այնինչ մոլեգին տարերքը սրընթաց շարժվում էր դեպի հ-ծ անտառը խա-տելով բնակիչների հանապազ-դյա հանգիստը: Ոլորապտույտ հողմի ահեղ սուլոցից շիկամազ սկյուռները թաքնվում էին իրենց փչակների խորքերում գայլերը աղիողորմ կա-կանձում քնաթաթախ արջերը քր-մնջում էին կ-կտուր մ-թմ-թալով և բնության տարերային իրարանցումից սահմռկած ամենքը կենդանի թե թռչուն թաքնվելու որև- խորշ խ-կվելու որևից- ճե-ք էր փնտրում այնտեղ կ-կվելու և պատսպարվելու համար:

Ընդհանուր խառնիճաղան-ությունից անմասն չէր նաև Արաքսը անդորր օրերին այնպե՛ս պ-րանքով հոսող մայր գետը: Թվում էր ա-շած և խորին վր-ովմունքով ճի- է անում որ դուրս ժայ-քի խեղ-ող ափերից տեսնելու ինչ է կատարվում զմրուխտ կանաչությամբ ծածկված Իշխանաց կղզում: Իսկ կղզին սարսափած բնության կար-եր խռովքից դողում էր չէ՞ որ կարող էր կուլ գնալ ահագնացող պ-տոր ջրերին:

1. Լրացրո՛ւ տեքստի բառերում բաց թողնված տառերը: (3 միավոր)
2. Կետադրի՛ր համր բնագիրը: (3 միավոր)
3. Տեքստից դուրս գրի՛ր տրված բառերի հոմանիշները՝ *սպրդել, բխել, ընդհատ, մառախուղ, լաջվարդ, հանդուգն, խռռոչ, պատատուկ, սեթևեթանք, տրտնջալ, մրրկածեծ, ուժգին, սրտաճմլիկ, ծերպ, գժդմնել:* (3 միավոր)
4. Փակագծերում տրված բաղադրիչը հանելով՝ բառերը գրի՛ր միասին, անջատ կամ գծիկով: տարուց (տարի), նոր(զելանդական), մի (երկու), բառ (գիրք), դեմ (դիմաց), ուս (ուսի), թերի (բարձրագույն), կազմ(պատրաստ), գնալ (հասնել), քաջ(առողջություն): (1 միավոր)
5. Կազմի՛ր 4 նախադասություն *շանթահարել* բառի բազմիմաստություններով: (2 միավոր)
6. Կազմի՛ր մեկական բառ տրված նախածանցներով ու վերջածանցներով և դրանց համանուն արմատներով. *առ, ամենա, հակ, դեր, վեր, ստոր, որդ, բար, շար, ակ*: (2 միավոր)
7. Գրի՛ր բառաքերական համանունների երկու զույգ և բացատրի՛ր իմաստները: (1 միավոր)
8. Գրի՛ր շարադրություն «Անտառային հեքիաթ» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)